ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 01.04.2022թ.),

քննելով «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ. ներկայացված և 29.03.2022թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/32 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 28.03.2022թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Վեճի առարկան.

1.1 ««Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից 14.01.2022թ հրապարակվել է ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով բաց մրցույթի նախարակման հայտարարություն եւ հրավեր, որն իրականացվելու է երկու փուլով (հետայսու՝ Ընթացակարգ):

Նախարակման ընթացակարգի հայտարարությամբ Պատվիրատուին ներկայացրել է 7 չափաբաժին ապրանք՝ ԱԱՇ օքսիգենատոր, որից 1-5 չափաբաժիններով ԱԱՇ օքսիգենատոր մանկական եւ 6-7 չափաբաժիններով՝ ԱԱՇ օքսիգենատոր մեծահասակի:

1.2 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 31.01.2022թ. ժամը 17:00-ն:

1.3 Ընթացակարգի մասնակցության հայտ են ներկայացրել երեք մասնակից, «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն, «Թեոֆարմա» ՍՊԸ-ն եւ «Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն):

Ընկերությունը հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով:

1.4 Ընթացակարգի հանձնաժողովի 31.01.2022թ ժամը 17:00-ի նիստում (թիվ 2-րդ արձանագրություն) հանձնաժողովը որոշել է, որ մասնակիցների հայտերի ծրարները կազմված են սահմանված կարգին համապատասխան, մասնակիցների հայտերում պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են եւ համապատասխանում են սահմանված պահանջներին, հաշվի առնելով գնումների օրենսդրության պահանջները, հանձնաժողովը որոշեց նախարակավորված բոլոր մասնակիցներին 01.02.2022թ ուղարկել 1-ին փուլի հրավերը, հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 16.02.2022թ. ժամը 12:00-ին:

1.5 Ընթացակարգի հանձնաժողովը 21.03.2022թ. թիվ 5-րդ արձանագրության 4-րդ կետով որոշել է՝ մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են եւ համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ հետևյալի.

«Մեգիէլ» ՍՊ ընկերության գնային առաջարկը ներկայացված չէ առանձին փակ ծրարով: Բացի այդ ընկերությունը հավելված 1.1-ով կրկնել է հրավերով նախատեսված ֆունկցիոնալ պահանջները, այնինչ հրավերի համաձայն ֆունկցիոնալ պահանջների շրջանակներում ընկերությունը պետք է ներկայացներ առաջարկվող կոնկրետ ապրանքի կոնկրետ տեխնիկական հատկանիշներ, որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել ապրանքի տեխնիկական առաջարկի գնահատումը: Հաշվի առնելով հրավերի պահանջները, հանձնաժողովը որոշեց փաթեթավորման անհամապատասխանության

հիմնավորմամբ գնային առաջարկը առանց ուսումնասիրելու (դիտելու) վերադարձնել մասնակցի ներկայացուցչին (ներկա է նիստին) և մերժել ընկերության հայտը:

Հանձնաժողովը նույն նիստում գնահատել է մյուս մասնակիցների հայտերը և 7-րդ կետով որոշել է՝ հաշվի առնելով այն, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին: ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենսդրությունը հանձնաժողովը որոշեց գնային առաջարկների բացման նիստին անցկացնել նաեւ բանակցություններ՝ գների նվազեցման շուրջ: Գնային առաջարկներ բացելու եւ գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով նիստ հրավիրել 29.03.2022թ ժամը 12:00-ին:

1.4 ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը Պատվիրատուն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետի, 88-րդ կետի խախտմամբ:

2. Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ,

հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ եւ արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ 1) էլեկտրոնային աճուրդը. 2) մրցույթը. 3) գնանշման հարցումը. 4) մեկ անձից գնումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով:

Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է երկու փուլով մրցույթի կիրառման պայմանները, համաձայն սույն հոդվածի 1-ին մասի՝ մրցույթը կարող է կատարվել երկու փուլով՝

1) եթե պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը.

2) եթե պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ.

3) եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել:

Գնման ընթացակարգը երկու փուլով անցկացնելու համար օրենսդիրը իրավական հիմք է սահմանել բացառությունների դեպքում, այսինքն Պատվիրատուի համար պետք է առկա լինի 19-րդ հոդվածով սահմանված եթեները, ինչպես նաեւ 18-րդ հոդվածով է սահմանված, որ գնման ընթացակարգը երկու փուլով կարող է անցկացվել օրենքով նախատեսված դեպքերում:

Վիճարկվող Ընթացակարգը Պատվիրատուն իրավասու չէր անցկացնել երկու փուլով, քանի որ առկա չէ օրենքով նախատեսված դեպքը:

Ընթացակարգով Պատվիրատուին անհրաժեշտ է ձեռք բերել ԱԱՇ օքսիգենատոր մանկական եւ մեծահասակի: Պատվիրատուն նշված ապրանքները մինչ օրս ձեռք է բերել

մեկ փուլով իրականացվող ընթացակարգով (օրինակ՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91, ի դեպ վերջինիս տեխնիկական բնութագրի և պայմանագրի մատակարարման ժամկետի վերաբերյալ Ընկերության ներկայացրած բողոքը գնումների հետ կապված բողոք քննող անձը 19.11.2021թ ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 որոշմամբ բավարարել էր, Պատվիրատուին պարտավորեցնելով՝ տեխնիկական բնութագիրը ներկայացնել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, սակայն Պատվիրատուն իրավապարտադիր որոշումը կրկին չէր կատարել), նախապես հրավերով ներկայացնելով ձեռք բերվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Այժմ Ընթացակարգն իրականացվում է իրավական հիմքի բացակայությամբ, երկու փուլով ընթացակարգի իրականացումը հետապնդում է մեկ նպատակ, որ նախապես հրապարակված տեխնիկական բնութագրերը չբողոքարկվեն եւ սահմանափակ հայտեր ներկայացվեն՝ սահմանափակելով մասնակիցների շրջանակը:

2.2 Կարգի 88-րդ կետի համաձայն՝ երկրորդ փուլի հայտը մասնակիցը ներկայացնում է օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով: Ընդ որում, գնային առաջարկը, որը պետք է դրվի նշված ծրարում, ներկայացվում է փակ՝ սոսնձված առանձին ծրարով, որի վրա կատարվում են հետեւյալ գրառումները՝...:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» եւ «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հրավերը և գնային առաջարկը ներկայացրել է Ընկերության լիազորված անձը, ով ներկայացնելու ժամանակ ցանկացել է գնային առաջարկը դնել առանձին ծրարի մեջ, սոսնձել, որպեսզի հանձնի, սակայն հանձնաժողովի նախագահ Ա. Օհանջանյանը արգելել է, թույլ չտալով դնել առանձին ծրարում՝ հանձնելու նպատակով և հայտարարել, որ այդ պահին դնել ծրարի մեջ և հանձնել, դա օրենքի խախտում է:

Վերը ներկայացված իրավական կարգավորումներից չենք կարող արձանագրել, որ մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը գնային առաջարկը ծրարի մեջ պետք է դներ կոնկրետ վայրում, օրինակ իր աշխատավայրում, այլապես այլ վայրում գնային առաջարկը ծրարի մեջ դնելը համարվում է օրենքի խախտում:

Այսպիսով՝ հանձնաժողովի նախագահ Օհանջանյանը խոչընդոտել է Ընկերությանը գնային առաջարկը փակ ծրարով ներկայացնել:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում եւ արձանագրվում են, եւ յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները եւ քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

21.03.2022թ նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել, մինչդեռ սույն կարգավորումն իմպերատիվ է եւ Պատվիրատուն պարտավոր է պահպանել սահմանված կարգը:

2.3 Երկրորդ փուլով ներկայացված հրավերով սահմանվել է ձեռք բերվող ապրանքի տեխնիկական բնութագրեր՝ հետեւյալ չափորոշիչներով.

1-ին չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մանկական 40 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 13 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչև 13 կգ քաշ ունեղոց նորածնային-մանկական վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ՝ մասնավորապես՝ – մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

2-րդ չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մանկական 10 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 14-18 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 14-18 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

3-րդ չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մանկական 30 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 19-24 քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 19-24 քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

4-րդ չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մանկական 30 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 25-35 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս

արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 25-35 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների և ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

5-րդ չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մանկական 25 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 36-70 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 36-70 կգ քաշ ունեղոց երեխաների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

6-րդ չափաբաժին –ԱԱՇ օքսիգենատոր մեծահասակի 100 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 110 կգ քաշ ունեղոց մեծահասակների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 110 կգ քաշ ունեղոց մեծահասակների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս

արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

7-րդ չափաբաժին – ԱԱՇ օքսիգենատոր մեծահասակի 100 հատ, գնման առարկայի որակական հատկանիշներ - մինչեւ 180 կգ քաշ ունեղոց մեծահասակների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Մինչեւ 180 կգ քաշ ունեղոց մեծահասակների վիրահատության ժամանակ արյան արհեստական շրջանառության ապահովման համար առավելագույնս արդյունավետ կիրառվող եւ արյանը նվազագույնս վնաս հասցնող օքսիգենատոր: Պետք է ունենա արտերիալ ֆիլտր, նախընտրելի է գործարանային ներկառուցված, ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ, ինչը նվազեցնում է ջերմափոխանակման ժամանակը: Պետք է ունենա արյան հետ շփման մակերեսների եւ ծավալների հնարավոր նվազ ցուցանիշներ, մասնավորապես՝ մեմբրանի մակերես, կարդիոտոմայի ռեզերվուարի ֆիլտրի մակերես, արտերիալ ֆիլտրի մակերես, ջերմափոխանակիչի մակերես, պրայմինգի ծավալ: Ներկայացված ցուցանիշների հավասարության դեպքում նախընտրելի օքսիգենատոր է հանդիսանում առավելագույն աշխատանքային ժամանակահատված ապահովողը:

Ներկայացված տեխնիկական բնութագրերը հավաստումն են այն բանի, որ պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրեր ներկայացնել հնարավոր է, ուստի առկա չի եղել օրենքով նախատեսված այն դեպքը (որ օրենսդիրը որպես բացառություն է նախատեսել), որ Պատվիրատուն պահանջվող ապրանքը ձեռք բերելու համար երկու փուլով ընթացակարգ անցկացնի:

Պատվիրատուն մշտապես հակված է խախտել օրենքը, խոչընդոտել, սահմանափակել հատապես «Մեգիէլ» ՍՊ ընկերության մասնակցությունը գնումների

գործընթացին: Ի հիմնավորում՝ զուգահեռներ անցկացնեմ 2020 թվականին հայտարարված ընթացակարգի և վիճարկվող ընթացակարգի միջև:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21 ընթացակարգով Պատվիրատուն ցանկանում էր ձեռք բերել ԱԱՇ օքսիգենատոր մեծահասակի: Ընկերությունը մասնակցության համար հայտ էր ներկայացրել համարժեք ապրանքով եւ Ա. Օհանջանյանը եզրակացություն էր տվել, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի կարող գնահատվել համարժեք պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, քանի որ Ընկերության առաջարկած օքսիգենատորը նախատեսված է 180 կգ քաշ ունեցող անձանց համար, իսկ «»Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում վերջին 25 տարվա ընթացքում այդ քաշի երկու հիվանդ են ունեցել, ուստի նպատակահարմար չէ ձեռք բերել Ընկերության առաջարկած օքսիգենատորը 180 կգ քաշ ունեցող մեծահասակների համար:

Իսկ սույն բողոքով վիճարկվող ընթացակարգով Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել 100 հատ ԱԱՇ օքսիգենատոր 180 կգ քաշ ունեցող մեծահասակների համար, որը պետք է մատակարարվի 2022 թվականի ընթացքում:

Երկու փուլով ընթացակարգով ներկայացված տեխնիկակն բնութագրերից պարզ է դառնում թե ինչպիսի չափորոշիչներ են կարևոր Պատվիրատուի համար, ուստի՝ Պատվիրատուն պետք է գնահատի մասնակիցների գնային առաջարկները, մինչդեռ թիվ 5-րդ արձանագրությունից այլ բան ենք արձանագրում, որ Պատվիրատուն խիստ սուբյեկտիվ է գնահատել երկու մասնակիցների ապրանքների տեխնիկական հատկանիշները: Եթե մասնակիցներից մեկը իր ապրանքի տեխնիկական բնութագրով ներկայացնում է նաև այլ չափորոշիչներ Պատվիրատուն կարող է մեկնաբանել, որ դա ընդունելի է և կրկին նախապատվություն տա իր ցանկալի մասնակցին:

Վերը ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա է հետևյալ չափորոշիչը «ջերմափոխանակիչի նախընտրելի նյութը՝ չժանգոտող պողպատ», այս չափորոշիչն արդեն իսկ սահմանափակող է, քանի որ Պատվիրատուն հստակ գիտի, որ այդ չափորոշիչով ապրանք մատակարարում է «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությունը Horizon ապրանքատեսակով եւ մինչ այժմ էլ ներկայցված տեխնիկական բնութագրերը ներկայացվել հենց այդ ընկերության մատակարարած ապրանքի հատկանիշներով (տես՛ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ընթացակարգերը):

3. Բողոքի ընդունելության հիմնավորում.

Սույն բողոքը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) եւ հասցեն.

2) պատվիրատուի անվանումը եւ հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը եւ առարկան.

4) վեճի առարկան եւ բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի եւ իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: ....

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրենսդրի կողմից սահմանված վերոնշված պահնաջներն առկա են սույն բողոքում: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բողոքվ ներկայացված է վեճի առարկան և պահանջը:

Եթե բողոքով ներկայացված վեճի առարկայի և պահանջի միջև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դիտարկմամբ կան որոշակի անհստակություններ, ապա դա ամենևին բողոքը վերադարձնելու հիմք չի կարող լինել, իսկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքեր «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում:

Ներկայացված բողոքի իրավական հիմքերի և ապացույցների լրացման, փոփոխման նպատակով բողոքաբերը սահմանափակված չէ և դրանք կարող է ներկայացնել նաև բողոքի քննության ընթացքում, ինչ վերաբերում է բողոքի պահանջին և վեճի առարկային, ապա այդ առումով ևս բողոքաբերը սահմանափակված և կաշկանդված չէ լրացնելու և/կամ փոփոխելու, հստակեցնելու բողոքի քննության ընթացքում, ընդհուպ մինչև բողոք քննող անձի կողմից որոշում կայացնելը: Վեճ առարկայի եւ պահանջի փոփոխման, լրացման կամ նոր ապացույցներ և իրավական հիմքեր ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ նաև՝ կապված Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումից:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) եւ որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին...:

Վիճարկվող ընթացակարգը Օրենքի և Կարգի խախտմամբ է տեղի ունենում, հետեւաբար՝ մրցույթի ընթացքը եւ արդյունքը չի կարող ապահովել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակները եւ սկզբունքներիը:

4. *Պահանջ.*

Պարտավորեցնել ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

Ի լրումն բողոքի 06.04.2022թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը՝

«28.03.2022 թվականին ներկայացրած բողոքով հայտնել էինք, որ Պատվիրատուն նաև խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետը, համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում եւ արձանագրվում են, եւ յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները եւ քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Բողոքով հայտնել էինք նաև, որ 21.03.2022թ նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել, մինչդեռ սույն կարգավորումն իմպերատիվ է և Պատվիրատուն պարտավոր է պահպանել սահմանված կարգը:

Պատվիրատուն ներկայացրել է ինչ-որ տեսանյութ ի հավաստում իբրև թե ղեկավարվել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով:

ՈՒսումնասիրելով ներկայացված տեսանյութը արձանագրում ենք, որ Պատվիրատուն հիմնավորել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի խախտումը: Պատվիրատուի կողմից ներկայացվածը բժշկական կենտրոնի սպասասրահում տեղադրված անվտանգության տեսախցիկների միջոցով արված տեսագրություն է, որն ամենևին էլ չի կարող գնահատվել որպես գնահատող հանձնաժողովի նիստերի տեսաձայնագրություն կամ ձայնագրություն:

Կարգը սահմանում է ձայնագրել կամ տեսաձայնագրել, ինչը նշանակում է, որ պետք լսելի լինի հանձնաժողովի անդամների եւ մասնակիցների գնման ընթացակարգի վերաբերյալ քննարկման նյութը:

Բողոքով հայտնել էինք, որ չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել 21.03.2022 թվականի նիստը, սակայն Պատվիրատուի ներկայացրած տեսանյութերից պարզ է դառնում, որ վիճարկվող Ընթացակարգի հանձնաժողովային այլ օրերի նիստերն էլ չեն ձայնագրվել կամ տեսաձայնագրվել, դրանք առհասարակ բացակայում են ներկայացված տեսանյութում: Ներկայացված տեսանյութը 21.03.2022 եւ 29.03.2022 թվականներին է:

Թիվ 5-րդ արձանագրությամբ որոշում էր կայացվել 29.03.2022 թվականին ժամը 12:00-ին հրավիրել բանակցություններ: Ներկայացված տեսանյութում առկա է 29.03.2022 թվականի տեսանյութը, տվյալ տեսանյութում նույնականացնում ենք գնահատող հանձնաժողովի քարտուղար Կարեն Դրամբյանին եւ ներկա են նաեւ մի քանի այլ անձինք, սակայն բնականաբար պարզ չէ, արդյոք հանձնաժողովի անդամները ներկա են թե՝ ոչ, հանձնաժողովն իրավազոր է եղել թե՝ ոչ: Ի դեպ Կարեն Դրամբյանի հետ նույն սեղանի շուրջ գտնվող անձանց շրջանակում ներկա չի եղել հանձնաժողովի նախագահ Ա. Օհանջանյանը:

Խնդրում ենք Պատվիրատուից պահանջել 29.03.2022 թվականի ժամը 12:00-ին հրավիրված նիստի թղթային արձանագրությունը (gnumner.am կայքում հրապարակված չէ), որից պարզ կլինի հանձնաժողովն իրավազոր է եղել, թե՝ ոչ:

Սույն դիրքորոշումը դիտարկել որպես 28.03.2022 թվականին ներկայացված բողոքի փաստական հիմքերի լրացում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.04.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>2. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.03.2022թ. թիվ 08-072 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 28.03.2022թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/32 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 18-րդ հոդվածի համաձայն գնման նախընտրելի ձևը հանդիսանում է բաց մրցույթը, ընդ որում բաց մրցույթը կարող է կատարվել նաև երկու փուլով, որի պայմանները ներկայացված են Օրենքի 19-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև՝ Կարգ) 81-99-րդ կետերով:

Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն.

«Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով ՝

1) եթե պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը.

2) եթե պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ.

3) եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել.

4) պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների կնքման դեպքերում:

2. Երկու փուլով մրցույթի ընթացակարգի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Պատվիրատուն հրավեր է ներկայացնում և բանակցությունների է հրավիրում միայն նախաորակավորված մասնակիցներին: Բանակցությունների նպատակն է մշակել պատվիրատուի պահանջները բավարարող գնման առարկայի բնութագրերի մեկ կամ ավելի այլ ընտրանքային տարբերակներ: Բանակցությունների արդյունքում պատվիրատուն նախաորակավորված մասնակիցներին տրամադրում է վերջնական հրավեր:»

Ընթացակարգը կազմակերպելիս Պատվիրատուն կիրառել է այս դրույթները, քանի որ նախկինում կազմակերպված բաց մրցույթների շրջանակներում բազմիցս բախվել է այնպիսի իրավիճակների հետ, երբ գնման առարկայի հստակ բնութագրման

պայմաններում չի կարողանում ապահովել Կարգի 22-րդ կետի պահանջները, իսկ ոչ լիարժեք բնութագրման պայմաններում՝ չի կարողանում ապահովել հնարավոր որակ, երբեմն նույնիսկ ստացվել են այնպիսի առաջարկներ, որոնք ֆունկցիոնալ առումով անընդունելի են:

Երկու փուլով գնման ընթացակարգը կազմակերպելը չի հանդիսանում որևէ խոչընդոտ մասնակիցների համար, այլ ընդհակառակը, այն հնարավորություն է տալիս բոլոր հնարավոր մասնակիցներին մասնակցել ապրանքների ֆունկցիոնալ նկարագրերի շուրջ քննարկումներին և դրանց վերաբերյալ առաջարկներ ներկայացնել Պատվիրատուին, ինչպես նաև տալիս է գնման առարկայի համար այլընտրանքային առաջարկներ ներկայացնելու հնարավորություն՝ առանց տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության հիմքով գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու մտավախության:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Մասնակցի այն պնդումը, թե Պատվիրատուն երկու փուլով բաց մրցույթով գնման ընթացակարգ կազմակերպելով խախտել է Օրենքի 18-ր և 19-րդ հոդվածների պահանջները, բացարձակ անհիմն են:

2. Կարգի 88-90-րդ կետերի համաձայն.

«88. Երկրորդ փուլի հայտը մասնակիցը ներկայացնում է օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով: Ընդ որում, գնային առաջարկը, որը պետք է դրվի նշված ծրարում, ներկայացվում է փակ՝ սոսնձված առանձին ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

1) «Գնային առաջարկ» բառերը.

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

89. Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում.

2) գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ.

3) որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ.

4) տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ: Տեխնիկական առաջարկը պետք է հնարավորինս համապատասխանի օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին.

5) հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ:

90. Երկրորդ փուլի հայտերը բացվում են օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով, որ՝

1) հրավերին համապատասխանող գնային առաջարկներ պարունակող ծրարները չեն բացվում, դրանք դրվում են առանձին ծրարի (տուփի) մեջ, որը սոսնձվում և փակվում է.

2) ծրարի (տուփի) վրա ստորագրում են նիստին ներկա գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը, որն այն վերցնում է ի պահ և ապահովում է դրա առանձնացված պահպանումը՝ հատուկ պահոցում.

3) արգելվում են տուփի կամ դրա մեջ դրված ծրարների բացումը կամ որևէ այլ կերպ մասնակիցների գնային առաջարկների հետ ծանոթանալուն ուղղված գործողությունները»:

Համաձայն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի.

3. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը երկրորդ փուլի հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ընդ որում, գնային առաջարկը, որը պետք է դրվի նշված ծրարում, ներկայացվում է փակ՝ սոսնձված առանձին ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

1) «Գնային առաջարկ» բառերը.

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են 1 բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/: Հայտում

ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե երկրորդ փուլի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա երկրորդ փուլի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև երկրորդ փուլի հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Ընթացակարգի երկրորդ փուլի Հրավերի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված է երկրորդ փուլի հայտերի ներկայացման կարգը, ըստ որի.

«4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է երկրորդ փուլի հայտ: Երկրորդ փուլի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ըստ նախաորակավորված չափաբաժնի:

Երկրորդ փուլի հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ երկու փուլով բաց մրցույթի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն հրավերը նախաորակավորված մասնակիցներին ծանուցելու օրվանից հաշված «21»-րդ օրվա ժամը «12:00»-ը ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեով :

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարեն Դրամբյանը: Հայտերը քարտուղարի կողմից

գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:....»

Հայտերի բացման նիստում՝

2) Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում երկրորդ փուլի հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված երկրորդ փուլի հայտերը, որից հետո հանձնաժողովը գնահատում է՝

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

8.8 Եթե երկրորդ փուլի հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի երկրորդ փուլի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ երկրորդ փուլի հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ դրույթներով հստակ սահմանված է, որ Մասնակիցը, գնային առաջարկը պետք է առանձին փակ ծրարով կազմված, վրան համապատասխան գրագրությունը ապահոված, դնի երկրորդ փուլի հայտի ընդհանուր ծրարի մեջ և մինչև երկրորդ փուլի հայտերի բացման նիստը ներկայացնի հանձնաժողովի քարտուղարին: Հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված հայտերը, իսկ համապատասխանող ծրարով ներկայացված գնային առաջարկերը առանց բացելու ընդհանուր փաթեթավորում և

տրամադրում է հանձնաժողովի քարտուղարին ի պահ, որն էլ իր հերթին ապահովում է դրա անձեռնամխելիությունը՝ մինչև գնային առաջարկերի բացման նիստը: Հետևաբար, բողոքաբերի այն պնդումը, որ հանձնաժողովի նախագահ Ա. Օհանջանյանը հայտերի բացման նիստի ընթացքում մասնակցի ներկայացուցչին չի թույլատրել բացված հայտի մեջ գտնվող գնային առաջարկը դնել ծրարի մեջ և կրկին ներկայացնել հանձնաժողովին՝ դրանով իսկ խախտելով իր իրավունքները, ուղղակիորեն հակասում է Օրենսդրությանը, ինչպես նաև կհանդիսանար ընթացակարգի մյուս մասնակիցների օրինական շահերի ոտնահարում:

3. Ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով գնման առարկայի համար նախատեսված նկարագրերի մասով.

Կարգի 85-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

«84. Գնահատող հանձնաժողովի քարտուղարն առաջին փուլի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող՝

1) երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտերի պատճենները փոխանցում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում նախաորակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների: Բանակցություններ կազմակերպելու մասին ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Բանակցություններին, խորհրդատուի կարգավիճակով, կարող են հրավիրվել նաև այլ անձինք: Նկարագրերի առաջարկ ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են: Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրում են բանակցությունների մասնակիցները: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության մասն է:

Կարգի 85-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

«85. Բանակցությունների արդյունքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում և հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարին է տրամադրում գնման վերանայված հայտը, որը ներառում է՝

1) գնման առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) վերջնական նկարագրերը, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.

տեղեկացնում ենք, որ ըստ չափաբաժինների նախատեսված նկարագրերը լիովին չեն ներկայացնում գնման առարկայի տեխնիկական հատկանիշներ, այլ հանդիսանում են գնման առարկայի ֆունկցիոնալ նկարագրեր:»

Կարգի 89-րդ կետի համաձայն.

«89. Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում.

2) գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ.

3)որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ.

4) տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ: Տեխնիկական առաջարկը պետք է հնարավորինս համապատասխանի օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին.

5) հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ:»

Կարգի 91-րդ կետի համաձայն.

«91. Լավագույն տեխնիկական առաջարկ ներկայացրած մասնակցի (մասնակիցների) առաջարկը գնահատվում է առավելագույն՝ «100» միավորով: Լավագույն գնահատված տեխնիկական առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր տեխնիկական առաջարկները»:

Վերոնշյալ դրույթները հստակ արտահայտում են հետևյալը.

Պատվիրատուն, առաջին փուլի բոլոր մասնակիցների հետ վարում է միաժամանակյա բանակցություններ՝ գնման առարկայի ֆունկցիոնալ նկարագրերի շուրջ, որի արդյունքում կազմավորվում է գնման առարկայի վերջնական, մասնակիցների կողմից ճիշտ ընկալելի ֆունկցիոնալ նկարագրերը: Այնուհետև, երկրորդ փուլի հայտով մասնակիցները պարտավոր են ներկայացնել, ոչ թե հրավերում ներառված ֆունկցիոնալ նկարագրերը, այլ դրանց հիման վրա կազմված տեխնիկական բնութագրերը՝ ընդ ում Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին հնարավորինս

համապատասխանող (բացակայում է 13-րդ հոդվածի 4-րդ մասի նշումը, քանի որ այն վերաբերվում է հենց ֆունկցիոնալ բնութագրեր ներկայացնելուն): Այնուհետև, ներկայացված հստակ տեխնիկական բնութագրերի հիման վրա միայն գնահատող հանձնաժողովը կարող է իրականացնել տարբեր(այլընտրանքային) առաջարկերի գնահատում:

Ընդհանրացնելով պարզ է դառնում, որ Բողոքաբեր ընկերությունը չի ընկալել ֆունկցիոնալ նկարագրերի և տեխնիկական հստակ չափանիշների իմաստային տարբերությունները:

4. Ինչ վերաբերվում է նիստերը ձայնագրելուն կամ տեսաձայնագրվելուն, ապա տարածքը, որտեղ անցկացվել է նիստը տեսաձայնագրվում է և այն կտրամադրվի բողոքի քննարկման նիստին: Ընդ որում Մասնակիցը նույնպես կաշկանդված չէ նիստը ձայնագրելու կամ տեսաձայնագրելու գործում և նման արգելքի երբևէ չի հանդիպել, ուստի ցանկության դեպքում ինքը կարող է այն իրականացնել:

Ամփոփելով վերոգրյալները գտնում ենք, որ Մասնակցի բոլոր պնդումները և պահանջները իրավաչափ չեն և բողոքը ենթակա չէ բավարարման:

Կից ներկայացնում ենք երկրորդ փուլի հրավերը»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման 04.04.2022թ. Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ «Մեգիէլ» ՍՊԸ կողմից 28.03.2022թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/32 ծածկագրով բողոքի վերաբերյալ.

31.03.2022թ. թիվ 08-072 գրությամբ տեղեկացրել էինք, որ բողոքում նշված նիստի ձայնագրությունը կներկայացնենք 04.04.2022թ. կայանալիք բողոքի քննության նիստին, սակայն տվյալ նիստին Պատվիրատուի կողմից իր ներկայացուցչի մասնակցության ապահովման անհնարինությամբ պայմանավորված Ձեզ ենք տրամադրում ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով ընթացակարգի 21.03.2022թ. նիստի ձայնագրությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.04.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 14-ի N 2 որոշման համաձայն կազմակերպվել է նախաորակավորման ընթացակարգ, որի հայտարարության 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ նախաորակավորման հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը կատարվում է նախաորակավորման հայտերի բացման նիստում՝ 31.01.2022թ. ժամը 17:00-ին, ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում և կարգով նախաորակավորման ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Լաէկա» ՀՁ ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ և «Մեգիէլ» ՍՊ ընկերությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների հայտերում պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են սահմանված պահանջներին և որոշում կայացրել նախաորակավորված բոլոր մասնակիցներին 01.02.2022թ. ուղարկել 1-ին փուլի հրավերը:

5. Ընթացակարգի հրավերի հայտարարության համաձայն՝ երկրորդ փուլի հայտեր կարող են ներկայացնել միայն նախաորակավորված մասնակիցները:

6. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն հրավերը նախաորակավորված մասնակիցներին ծանուցելու օրվանից հաշված «21»-րդ օրվա ժամը «12:00»-ը ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ

սահմանված ժամկետում ընթացակարգի երկրորդ փուլի հայտեր են ներկայացրել «Լաէկա» ՀՁ ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ և «Մեգիէլ» ՍՊ ընկերությունները:

8. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի, այն է՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ներկայացված չէ առանձին փակ ծրարով: Բացի այդ ընկերությունը հավելված 1.1-ով կրկնել է հրավերով նախատեսված ֆունկցիոնալ պահանջները, այնինչ հրավերի համաձայն՝ ֆունկցիոնալ պահանջների շրջանակներում ընկերությունը պետք է ներկայացներ առաջարկվող կոնկրետ ապրանքի կոնկրետ տեխնիկական հատկանիշներ, որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել ապրանքի տեխնիկական առաջարկի գնահատումը և որոշում կայացրել փաթեթավորման անհամապատասխանության հիմնավորմամաբ գնային առաջարկը առանց ուսումնասիրելու (դիտելու) վերադարձնել մասնակցի ներկայացուցչին (ներկա է նիստին) և մերժել ընկերության հայտը:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և բողոքի լրացումը, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գրությունները՝ կից փաստաթղթերով, «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով ընթացակարգի հրավերը և նախաորակավորման հայտարարությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ 1) էլեկտրոնային աճուրդը 2) մրցույթը 3) գնանշման հարցումը 4) մեկ անձից գնումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***<u>մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով:</u>***

Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթը կարող է կատարվել երկու փուլով՝

1) եթե պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը.

2) եթե պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ.

3) եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել:

2. ***<u>երկու փուլով մրցույթի ընթացակարգի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ:</u> Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: <u>Պատվիրատուն հրավեր է ներկայացնում և բանակցությունների է հրավիրում միայն նախաորակավորված մասնակիցներին:</u> Բանակցությունների նպատակն է մշակել պատվիրատուի պահանջները բավարարող գնման առարկայի բնութագրերի մեկ կամ ավելի***

այլընտրանքային տարբերակներ: Բանակցությունների արդյունքում պատվիրատուն նախաորակավորված մասնակիցներին տրամադրում է վերջնական հրավեր:

Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախաորակավորման հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում և պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը.

2) գնման ընթացակարգի ծածկագիրը.

3) մասնակիցների նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունքի մասին հայտարարությունը.

4) լեզուն կամ լեզուները, որոնցով պետք է ներկայացվեն նախաորակավորման հայտերը.

5) պայմանագրի և գնման առարկայի բնութագրերի բովանդակության համառոտ և հստակ շարադրանքը.

6) նախաորակավորման հայտի պատրաստման և ներկայացման կարգը, այդ թվում՝ ձևն ու վայրը, ներկայացման վերջնաժամկետը.

7) մասնակցի՝ մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող պահանջները և դրանց գնահատման կարգը.

8) նշում այն մասին, որ տվյալ գնման գործընթացի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է այդ համաձայնագրով սահմանված շեմերը, և գնման գործընթացը կազմակերպվում է երկու փուլով մրցույթի ընթացակարգով.

9) այլ անհրաժեշտ պահանջներ, որոնք վերաբերում են նախաորակավորման ընթացակարգին:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

6.***<u>Նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով գնահատվում է մասնակցի հայտը՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կազմվում է նախաորակավորված մասնակիցների ցուցակ:</u>***

<u>7. Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցները:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 13-րդ գլխի՝ երկու փուլով մրցույթի կիրարկման կարգի համաձայն՝

81 Երկու փուլով մրցույթի կազմակերպման դեպքում՝

1) նախաորակավորման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրությունը հաստատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով նախաորակավորված բոլոր մասնակիցներին միաժամանակ տրամադրում (ուղարկում) է հրավեր.***

2) հրավերով, գնման առարկայի հատկանիշները սահմանվում են որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի նախնական տարբերակը:

82. ***<u>Հայտերը ներկայացվում են երկու փուլով:</u>*** Առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի տասնհինգ օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է հրավերի տրամադրման օրվանից: ***Առաջին փուլի հայտը, որը չի պարունակում գնային առաջարկ, ներառում է մասնակցի առաջարկները հրավերով ներկայացված գնման առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ (նկարագրերի առաջարկ):*** Մասնակիցը նկարագրերի առաջարկի հիմնավորման նպատակով առաջին փուլի հայտով կարող է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ, եզրակացություններ և այլ նյութեր:

83. Մասնակիցը առաջին փուլի հայտը ներկայացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված թղթային կամ էլեկտրոնային գրությամբ, մինչև առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար հրավերով նախատեսված ժամկետի ավարտը:

84. Գնահատող հանձնաժողովի քարտուղարն առաջին փուլի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող՝

1) երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտերի պատճենները փոխանցում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում նախաորակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների: Բանակցություններ կազմակերպելու մասին ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում

է էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Բանակցություններին, խորհրդատուի կարգավիճակով, կարող են հրավիրվել նաև այլ անձինք: Նկարագրերի առաջարկ ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են: Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրում են բանակցությունների մասնակիցները: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության մասն է:

85.Բանակցությունների արդյունքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում և հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարին է տրամադրում գնման վերանայված հայտը, որը ներառում է՝

1) գնման առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) վերջնական նկարագրերը, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.

(…)

86. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

1) սույն կարգի համաձայն գնահատում և ապահովում է գնման վերանայված հայտի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

2) գնման վերանայված հայտն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում երկրորդ փուլի հրավերը (վերջնական հրավերը)՝ կից գրությամբ, էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է նախաորակավորված բոլոր մասնակիցներին և առաջարկում ներկայացնել երկրորդ փուլի հայտ:

87. Երկրորդ փուլի հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քսան օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է վերջնական հրավերը նախաորակավորված մասնակիցներին ուղարկվելու օրվանից:

88. ***Երկրորդ փուլի հայտը մասնակիցը ներկայացնում է օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով: Ընդ որում, գնային առաջարկը, որը պետք է դրվի նշված ծրարում, ներկայացվում է փակ՝ սոսնձված առանձին ծրարով***, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

1) «Գնային առաջարկ» բառերը.

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

89. Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում.

2) գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ.

3) որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ.

4) տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ: Տեխնիկական առաջարկը պետք է հնարավորինս համապատասխանի օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին.

5) հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ:

90. Երկրորդ փուլի հայտերը բացվում են օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով, որ՝

1) հրավերին համապատասխանող գնային առաջարկներ պարունակող ծրարները չեն բացվում, դրանք դրվում են առանձին ծրարի (տուփի) մեջ, որը սոսնձվում և փակվում է.

2) ծրարի (տուփի) վրա ստորագրում են նիստին ներկա գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը, որն այն վերցնում է ի պահ և ապահովում է դրա առանձնացված պահպանումը՝ հատուկ պահոցում.

3) արգելվում են տուփի կամ դրա մեջ դրված ծրարների բացումը կամ որևէ այլ կերպ մասնակիցների գնային առաջարկների հետ ծանոթանալուն ուղղված գործողությունները:

91. Լավագույն տեխնիկական առաջարկ ներկայացրած մասնակցի (մասնակիցների) առաջարկը գնահատվում է առավելագույն՝ «100» միավորով: Լավագույն գնահատված տեխնիկական առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր տեխնիկական առաջարկները:

(...)

Նախաորակավորման ընթացակարգի մասին հայտարարության 5-րդ կետի 5.1, 5.2 և 5.3 ենթակետերի համաձայն՝

5.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

5.2 Մասնակիցը նախաորակավորման հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում-հայտարարություն ՝ համաձայն հավելված N 1-ի,

2) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հայտարարագիրը որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հայտարարությամբ սահմանված որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանության մասին՝ համաձայն հավելված 2-ի,

4) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5.3. Մասնակիցը կարող է նախաորակավորման հայտը ներկայացնել հանձնաժողովին.

1) էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ,

2) փաստաթղթային ձևով՝ փակ ծրարով, սոսնձված: Ծրարի վրա նախաորակավորման հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա. պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ. ընթացակարգի ծածկագիրը.

գ. «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Ընթացակարգի հրավերի հայտարարության համաձայն՝ սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28 ծածկագրով անցկացվող երկու փուլով բաց մրցույթի հայտարարության:...

<u>Երկրորդ փուլի հայտեր կարող են ներկայացնել միայն նախաորակավորված մասնակիցները:</u>

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրած որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

2) տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ: Տեխնիկական առաջարկը պետք է հնարավորինս համապատասխանի օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին. ինչպես նաև պարունակի առաջարկվող ապրանքի անվանումը, արտադրողը և ապրանքային նշանը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր). Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ:

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

3) -

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսպիսով՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 14-ի N 2 որոշման համաձայն կազմակերպվել է նախաորակավորման ընթացակարգ, որի հայտարարության 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Նախաորակավորման հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը կատարվում է նախաորակավորման հայտերի բացման նիստում՝ 31.01.2022թ. ժամը 17:00-ին, ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեում:

Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում և կարգով նախաորակավորման ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Լաէկա» ՀՁ ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ և «Մեգիէլ» ՍՊ ընկերությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների հայտերում պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են սահմանված պահանջներին և որոշում կայացրել նախաորակավորված բոլոր մասնակիցներին 01.02.2022թ. ուղարկել 1-ին փուլի հրավերը:

Ընթացակարգի հրավերի հայտարարության համաձայն՝ երկրորդ փուլի հայտեր կարող են ներկայացնել միայն նախաորակավորված մասնակիցները:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն հրավերը նախաորակավորված մասնակիցներին ծանուցելու օրվանից հաշված «21»-րդ օրվա ժամը «12:00»-ը ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում ***ընթացակարգի երկրորդ փուլի հայտեր են ներկայացրել*** «Լաէկա» ՀՁ ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ և ***«Մեգիէլ» ՍՊ ընկերությունները***:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների հայտում հրավերով պահանջվող բոլոր

փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի, այն է՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ներկայացված չէ առանձին փակ ծրարով: Բացի այդ ընկերությունը հավելված 1.1-ով կրկնել է հրավերով նախատեսված ֆունկցիոնալ պահանջները, այնինչ հրավերի համաձայն՝ ֆունկցիոնալ պահանջների շրջանակներում ընկերությունը պետք է ներկայացներ առաջարկվող կոնկրետ ապրանքի կոնկրետ տեխնիկական հատկանիշներ, որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել ապրանքի տեխնիկական առաջարկի գնահատումը և որոշում կայացրել փաթեթավորման անհամապատասխանության հիմնավորմամաբ գնային առաջարկը առանց ուսումնասիրելու (դիտելու) վերադարձնել մասնակցի ներկայացուցչին (ներկա է նիստին) և մերժել ընկերության հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն վիճարկվող Ընթացակարգը իրավասու չէր անցկացնել երկու փուլով, քանի որ առկա չէ օրենքով նախատեսված դեպքը:

Ընթացակարգով Պատվիրատուին անհրաժեշտ է ձեռք բերել ԱԱՇ օքսիգենատոր մանկական և մեծահասակի: Պատվիրատուն նշված ապրանքները մինչ օրս ձեռք է բերել մեկ փուլով իրականացվող ընթացակարգով»:

Ի պատասխան բողոքաբերի վերը նշված դիտարկման՝ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգը կազմակերպելիս Պատվիրատուն կիրառել է այս դրույթները, քանի որ նախկինում կազմակերպված բաց մրցույթների շրջանակներում բազմիցս բախվել է այնպիսի իրավիճակների հետ, երբ գնման առարկայի հստակ բնութագրման պայմաններում չի կարողանում ապահովել Կարգի 22-րդ կետի պահանջները, իսկ ոչ լիարժեք բնութագրման պայմաններում՝ չի կարողանում ապահովել հնարավոր որակ, երբեմն նույնիսկ ստացվել են այնպիսի առաջարկներ, որոնք ֆունկցիոնալ առումով անընդունելի են»:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ 1) էլեկտրոնային աճուրդը 2) մրցույթը 3) գնանշման հարցումը 4) մեկ անձից գնումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով:***

Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթը կարող է կատարվել երկու փուլով՝

1) եթե պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը.

2) եթե պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ.

3) եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ ***գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝***

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Այսպիսով՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին, և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Վերը նշված իրավական կարգավորումները հստակ ցույց են տալիս, որ գնումը պատվիրատուի հատուցմամբ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է: Ընդ որում՝ օրենսդիրը՝ հաշվի առնելով գնման արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքի կարևորությունը, պատվիրատուի համար նախատեսել է իրավունք՝ օրենքով նախատեսված դեպքում, մրցույթը իրականացնել նաև երկու փուլով:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Պատվիրատուն, օգտվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքից և Ընթացակարգը իրականացնելով երկու փուլով, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, հետևաբար գտնում եմ, որ բողոքաբերի դիտարկումն, այն մասով, որ Պատվիրատուն վիճարկվող Ընթացակարգն իրավասու չէր անցկացնել երկու փուլով, անհիմն է:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքաբերը նման դիտարկմամբ հակասում է մինչ այս իր կողմից տարբեր բողոքների շրջանակներում ներկայացված փաստացի և իրավական հիմքերին, քանի որ մինչ սույն բողոքը «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվել են բողոքներ, որոնց համաձայն Ընկերությունը վիճարկել է Պատվիրատուի կողմից նույն գնման առարկայի մասով ներկայացված տեխնիկական բնութագերի կազմման իրավաչափությունը, փաստացի՝ Պատվիրատուի կողմից անցկացվող երկու փուլ մրցույթը, ինչպես «Մեգիէլ» ՍՊԸ-ի, այնպես էլ Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող ընկերություններին հնարավորություն է տալիս մասնակցել ապրանքների ֆունկցիոնալ նկարագրերի շուրջ քննարկումներին և դրանց վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ ներկայացնել Պատվիրատուին, հետևաբար գտնում եմ, որ բողոքաբերի դիտարկումները սույն մասով անհիմն են:

Ընդ որում՝ հարկ եմ համարում արձանագրել, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ի սկզբանե տեղյակ լինելով, որ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման համար որպես գնման ձև հաստատված է «երկու փուլ մրցույթ»-ը, մինչև հայտերի բացում չի վիճարկել նշված փաստը, ավելին՝ մասնակցության հայտ է ներկայացրել նախաորակավորման փուլում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն ներառվել է նախաորակավորված մասնակիցների ցանկում, այնուհետև՝ երկրորդ փուլի ժամանակ հայտ ներկայացնելուց և հայտը մերժվելուց հետո նոր միայն վերջինս որոշել է վիճարկել գնման ընթացակարգի ձևը:

Ինչ վերաբերում է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով 21.03.2022թ. և 29.03.2022թ. հրավիրված նիստերի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների իրավաչափության վերաբերյալ ներկայացված դիտարկումներին, այն է՝ Ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Օհանջանյանը խոչընդոտել է Ընկերությանը գնային առաջարկը ներկայացնել փակ ծրարով, ինչպես նաև

վերը նշված նիստերի շրջանակներում թույլ է տրվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի խախտում, արդյունքում խնդրել է չկայացած հայտարարել «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթը, այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթ:

Կարգի 82-րդ կետի համաձայն՝ հայտերը ներկայացվում են երկու փուլով:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ երկու փուլով մրցույթի ընթացակարգի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ:

Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցները:

Ընթացակարգի հրավերի հայտարարության համաձայն՝ երկրորդ փուլի հայտեր կարող են ներկայացնել միայն նախաորակավորված մասնակիցները:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով ընթացակարգը բաղկացած է երկու փուլից, այսինքն՝ հայտերը ներկայացվում են երկու փուլով, այն է՝ նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու հայտ և երկրորդ փուլ՝ արդեն իսկ նախաորակավորված մասնակցի կողմից ընթացակարգին մասնակցության հայտ:

Ներկայացված պահանջի շրջանակներում անդրադառնալով բողոքաբերի՝ ամբողջ գնման ընթացակարգը՝ «ՆՄԲԿ-ԵՓԲՄԱՊՁԲ-22/28» ծածկագրով երկու փուլ մրցույթը, վերը նշվածի հիմքով չկայացած հայտարարելու փաստարկին, հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքով ներկայացվածը չի կարող հանդիսանալ ամբողջ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմք, ուստի դրա վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացված փաստերը բողոքի պահանջի լուծման համար էական նշանակություն ունենալ չեն կարող, հետևաբար սույն որոշման շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից քննարկման առարկա չեն դարձվում:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**